

ՀԱՅ ՍԿԱՆՈՒՄ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 15

1 ՅՈՒՆԻՍ 1920

ՔԵԶԻ Կ'ՍՊԱՍԵՆ

ՀՍԾ ՍԿԱՆՈՒ ՏՆԵՐՈՒՆ

28 Մայիս 920

Հայ Հանրապետութեան Տարեսունն է այսօր: Ուրախ եւ հպարտ է ամէն Հայ, դարերով երազուածը իրականութիւն մըն է հիմայ եւ ՀԱՅԱՍՏԱՆ ՄԸ՛ ՈՒՆԻՆՔ:

Սակայն ամէն այս տեսակի արտայայտութիւններ պարտականութեան գիտակցութիւն մը կ'ենթադրեն:

Հայր այսօր աշխարհի ազգերուն առջեւ պարտականութիւն մը կ'ստանձնէ, պատասխանատուութիւն մը յանձն կ'առնէ. կազմեյ հայրենիյ մը եւ բարգաւաճեցեյ զայն:

Ազգը այս յանձնառութիւնը կ'ընէ ուժի մը վրայ վստահելով, եւ այդ ուժը, այդ վստահութեան յենարանը դուն ես հայ պատանի: Դուն լաւ զիտցիր պարտականութիւնդ:

Հայր հալածական ու յոգնած, Հայաստանը աւերակ ու ամայի կ'սպասեն քեզի, բու բազուկներուդ:

Դարերէ ի վեր կը մաքառի ցեղդ, կը դիմադրէ փոթորիկներու, եւ տակաւին այսօր ան պատնէշին վրայ է երբ արշալոյսը կը ծագի, որովհետեւ թշնամիներով շրջապատուած է մայր հայրենիքը, եւ բու երէց եղբայրներդ կը հակեն հոն՝ պատնէշին վրայ:

Վաղը, ինչ կ'ըսեմ, այսօր, այսօր իսկ կը լսենք հայրենահրաւէր փողը, մեզի է այս հրաւէրը, մանաւանդ քեզի, հայ սկառուտ պատանի:

Պիտի սկսի հայրենաշէն աշխատանքը եւ դուն երբ ոտք պիտի դնես հայրենիքիդ սեմին վրայ, հոն անմիջապէս այդ տեղէն, բու երէց եղբայրներուդ կողքին պիտի սկսիս ստեղծագործող, շէնցնող աշխատանքի: Ոտքերուդ առջեւ ցեղիդ ոսկորները, անոր բանդուած օճախներուն աւերակոյտերը պիտի տեսնես, զերեզմանի տպաւորութիւն պիտի թողու բու վրադ այդ տեսարանը:

Պիտի չը յուսահատիս, պիտի սկսիս մէկ կողմ զետեղել այդ նուիրական փշուրները եւ անոնց տեղ պիտի դնես կեանքի դրօշմը:

Այո՛, ամայութիւն կը տիրէ հոն, դուն բու երգովդ պիտի ոգևորես այդ ամայութիւնը:

Աւերակ է այդ երկիրը, դուն բու բազուկներովդ պիտի կերտես անոր աւերակ գիւղերն ու բաղաբները: Ամիացած են դաշտերն ու պարտէզները, դուն արգասաբեր պիտի դարձնես անոնք, բու բրտիներովդ:

Քեզի կ'սպասեն Հայն ու Հայաստանը:

ՍԿԱՌԻՏԻԶՄԻ ՄԱՍԻՆ



ՅԱՌԱՋԱԲԱՆ ՄԸ

1912ին Le Livre de l'Eclaircisseurի հրատարակութենէն ի վեր շատ դէպքեր ու փոփոխութիւններ պատահած են: Մասնաւորաբար սկսուած քիմիա մասին վերջին ութը տարիներու ընթացքին Թրանսայի մէջ կարեւոր փորձեր եղան, հակառակ որ դժուարութիւններ, և նոյնիսկ որոգայթներ կը լարուին ամէն նոր ձեռնարկի համար:

Հակառակ յոռետեսներու դէշ գուշակութիւններուն, սկսուած քիմիայէն առաջին փորձէն իսկ յաղթական ելաւ:

Իր ուժը ու կենսունակութիւնը ցոյց տուաւ պատերազմի ճգնաժամի միջոցին թէև շատ մը ընկերակցութիւններու մէջ կատարեալ անկազմակերպութիւն ստեղծուեցաւ:

Այսօր, հաստատուած է թէ քաղաքներու 11-15 տարեկան պատանիները կը սիրեն կանոնաւորուած ազատութիւնը, որ կը կազմէ սկսուած քիմիայի հիմը:

Այս հիման վրայ առանց վախի կրնանք թափել այն լուրջ ջանքը որ անհրաժեշտ է կատարել, տարածելու համար՝ Պոյ-սկսուածներու կազմակերպութիւնը, այնքան որքան տարածուած է ուրիշ երկիրներու մէջ:

Իրապէս, անհրաժեշտ է, մինչև հիմա քաղաքացիական փորձառութիւններուն վրայ հիմնուելով, հարցը հիմնել ճշմարիտ ծրագրի մը վրայ:

Ահ սուսիկ մեր այն գաղափարները, որոնք պէտք է իշխեն, այս ձեռնարկին վերաբարձումին և տարածմանը:

Սկսուած քիմիայի մասնաւորաբար 11-15 տարեկան տղոց համար է:

Պատանեկութեան այս առաջին շրջանին մէջ, տղան բոլորովին կը նստի, առանց կեղծ ամօթխածութեան, առանց վերապահութեան, այն արտաքին ընդլայնումին ուր ինքզինքը կարող կ'զգայ, բնաճողի և նոյն իսկ դիպուածական յոյսերու մէջ ապրիլ, որոնք յաճախ ուղեղին մէջ մուտք կը գործեն:

Այս արկածախնդրութիւնը դրուած է շատ մեծ շրջանակի մէջ, ընտրութիւնը, նամանաւանդ վայրի ընտրութիւնը, անտառները, ժայռերը, կիրճերը կը կազմեն այդ շրջանակը:

Խաղի ձեւին տակ, երեւակայութիւնը և ընթերցումները օժանդակելով, երիտասարդը

կը ջանայ նախնական կեանքը կեղծել (նմանցընել) անտառներու մէջ շրջագայելով հետքեր գտնել որսի կենդանիներ հետապնդել և այլն:

Մարդկային և կամ բնութեան որոգայթներուն դէմ ինքնապաշտպանութեան համար, դիտողութիւնը կը ս'ընեն կը հաստատեն խոհականութիւնը և խոհականութիւնը ձեւեր, գաղտնի նշաններ հետքերէ հասկնալ և այլն:

Ի պրոցակայնը կը նմանի վայրի կենդանիներ հետապնդող որսորդին կամ պատերազմի շարքերուն մէջ գտնուող զինուորին: Բնութեան ծօցին մէջ մտքուր օլ կը շնչէ, կազդուրիչ շարժումներ կը կատարէ, քննելու, դատելու և վնասելու յատկա թիւններ կը շահի:

Ատոնց և՛ զատ տղան մեծ հաճոյք կ'զգայ սկսուած քիմիայի բարոյական պարտականութեանց հանդէպ յարգանք տւենալ և իւրացնել օգտակար ծանօթութիւններ և կրթիչ ֆիզիքական վարժութիւններ ընել:

Այս ճշմարիտ մանկավարժութիւնը կ'օգտագործենք փորձով հաստատուած տարիքի սահմանին մէջ այն է 11 15: Այդ տարիքէն վեր երիտասարդութիւնը կը հետեւի սրօրի ընկերակցութեան կամ մարմնակարգական միութիւններու մէջ և կամ զինուորական ծառայութեան կը պատրաստուի:

Ներքին է յուսալ թէ 11էն վար եղողները, այսինքն 7-10 տարեկան փոքրերն ալ կարելի պիտի ըլլայ համախմբել: Անոնք հիացումի և բուռն տենչի ակնարկներ կը նետեն իրենցմէ տարիքոտ սկսուածներուն և յաճախ անոնց խճապեաններու զիջողութենէն սգտուելով կը մտնեն շարքերուն մէջ ուր գաճաճներու երեւոյթ կուտան:

Անգլիացիք այս հարցն ալ լուծած են, կազմելով «lenderfoot»-եր (փափուկ ոտք) որոնցմէ գոհացուցիչ արդիւնք ստացած են: Հետեւինք անոնց: Փնտռենք այդ մանկական խումբերուն յարմար անուն և հագուստ և սահմանափակենք անոնց վարժութիւնները, խաղերը, առանց չեղելու սակայն խոհեմութեան ամենատարրական սկզբունքներէն:

Լաւ պիտի ըլլար այսպիսիները կիներու խնամքին յանձնելու: Պատերազմի տեսողութեան այնքան ազնուօրէն կատարուած զոհաբերութիւնները, մեզ կը վստահեցնեն թէ անոնք ի գործ պիտի դրուին նաև խաղաղութեան արշալոյսին:

Մասնաւորաբար, մեր դաստիարակութիւնները որոնք գիտցան այնքան լաւ կարողութեամբ



Բերայի սկաուտները որբերն այ միասին

վարել մեր երիտասարդ տղաց զասարակները ալ աւելի մեծ և մասնաւոր շահ մը ունին տղոց ֆիզիքական զարգացման հարցերուն մէջ: Կարծես թէ անոնք ճշմարտապէս պատրաստուած են այս հարցին լուծման համար:

Սկաուտական դաստիարակներու ընտրութիւնը կամ կազմութիւնը մեզ համար պէտք է ըլլայ գլխաւոր հարցը: Այս կամ այն կերպով, անհրաժեշտ է ունենալ սկաուտ պետերու համար վարժարաններ, և անոնց որոշ արտօնագիր տալ որպէս զի անոնք կարենան լիովին, փափաքելի հեզինակութեամբ, իրենց պարտականութիւնը կատարել սկաուտներու հանդէպ և շահիլ ծնողքներուն բացարձակ վստահութիւնը:

Արդէն ապօրէն է եթէ մեր սկաուտ պետերը անհրաժեշտ ծանօթութիւններ ու գտնողացում չունին, քանի որ սկաուտները յաճախ անոնց քննութեան կ'անթարկուին: Միայն սկաուտիդ մի մասնաւոր գործնական մասերը գիտնալը և կամ բարի կամեցողութեամբ խումբ մը տղաքներ առաջնորդելը բաւարար չէ, այլ անհրաժեշտ է որ սկաուտ-պետ մը ունենայ գոհացուցիչ զարգացում և սկաուտիզմի կատարեալ հմտութիւն:

Վերջապէս եթէ կ'ուզենք յաջողիլ և մեր զաղափարին ճշգրտութենէն չհեղիլ, անհրաժեշտ է քաղաքներէն դուրս աշխատիլ: Արշաւներու օրերը շատ չեն, որպէս զի կարելի ըլլայ անոնց մէկ մասը հանրային վայրերու, հանդէսներու մէջ փողոցային տղանցքի յատկաներնել: Անհրաժեշտ է որ այսպիսի արարողու-

թիւնները բացառիկ պարագաներու մէջ միայն ըլլան և ամէն ջանք թափուի որպէս զի խումբերը փութով նետուին մօտակայ դաշտերը ուր խմբակները պիտի գրուին վայելելու համար բընութեան գեղեցկութիւնները: Այս կեանքը, ֆիզիքական և բարոյական յատկութիւններու, զարգացման միութիւնը, մայր բջիջն է, առանց որոնց ճշմարիտ սկաուտական կեանք գոյութիւն չունի:

Սկաուտիզմը եւ սքաւտազմը. —

Այն ահռելի ճգնաժամէն վերջ, ուրկէ Ֆրանսա թմրած ու արիւնք ցամքած, յաղթական դուրս եկաւ, ճարտասանական մեծ նախադասութիւններ աւելորդ են, ապացուցանելու այն մեծ գործին կարեւորութիւնը որու նուիրուած են սկաուտիզմի վարիչները:

Ազգային դաստիարակութեան համար առաջնական գործ մըն է, որ կը լրացնէ վարժարանի պակասը և կը պատրաստէ բանակի դաստիարակութեան նախաքայիները: Սկաուտական շարքերու մէջ կը տեսնենք վաղուան բանակը. բարեփոխուած վիճակի մէջ:

Այս առթիւ աւելորդ չպիտի ըլլայ երկու խօսք ընել այն բաժինին համար զոր անգլիացիք առին սկաուտիզմէն: Հրաշալի կանխագիտութեամբ, Պատրն-Բաուլ նախատեսած էր մեծ պատերազմը: Անհրաժեշտ է կարդալ իր Scouting for Boys գրքին նախաբանը հոն տեսնելու համար այս մարգարէական յայտարարութիւնները: Բազմաթիւ թշնամիներու կողմէ յարձակ-

ման պիտի ենթարկուինք: Տղայ մը որ ինքնապաշտպանութեան պատրաստ չէ, և չի գիտեր հրացան արձակել ճագարի պէս պիտի սպաննուի:»

Սաստիգմի հիմնադիրը, իրեն միակ նըպատակ յունեցաւ զինուորական պատրաստութիւնները, բայց իր խոսքերէն կ'որելի է նեհետեցնել թէ 190-էս ի վեր, Պատրն-Քատոյ կարող զինուորական մը, նշարեց թէ, իր մէջտար որքան լաւ էր կազմելու համար քաջ, զորասոր ճարպիկ, գիտուն, բարոյ սկան կորովով լի լաւ զինուորը որ կը շահի պատերազմները:

Իրապէս, սկստութիւնը բրիտանական բանակին հետեւեալ գնահատելի ծառայութիւնը մատուցած է: 1914ի վերջը, գործօն բանակին սպաներուն երկու երրորդը կորսուած էր: Պարտաւորիչ ծառայութեան համար առաջին հրաւերին պատերազմ, նախարարութիւնը (7000) սկստապետեր ունեցաւ որոնց կրցաւ զանազան զինուորական առիճաններ տալ:

Ծովային պատերազմի մէջ ալ, պոյ սկստուաներու դերը կարեւոր եղաւ: 25,000 պոյ սկստուաներ կամ ծովային սկստուաներ ծովեզերքներու հսկիչներ եղան և հող գտնուող ծովային զինուորները զացին աւելցնել նաւատարմի նաւազախումը:

Քանի որ պատերազմի մասին խոսեցանք, մեր ակնարկը նեանք դէպի մեր կրթիչներն ու սկստուաները, որոնք զինուորական տարիք ունին, և անմիջապէս կամովին կ'երթան մանկ հայրենի դրօշին տակ:

Շատեր կորան, ուրիշներ պոխախ կամ ումիտի անգութ հարուածներուն ենթարկուեցան: Ամէնքն ալ յաղթանակներ չահեցան: Ի մօտոյ պիտի հրատարակուի այն գիրքը որ պիտի յիշատակուի այդ հերոսներուն պատմութիւնը:

Երբ երէց սկստուաները, կոստելով կը կատարէին իրենց հայրենիքի երգումը, ամէնէն փոքրերը կը ջանային քաղաքներու մէջ լրացնել կարեւոր դերեր: Նոյնիսկ զբաւուած հողամասերուն մէջ գտնուող մեր սկստուաները քաղաքային պարտականութենէն դուրս կ'ելլէին վտանգելով իրենց կեանքը, Ուրիշներ հանրային զինուորական և քաղաքային գործերու եռանդուն օժանդակներ, հիւանդանոցներուն, կայարաններու, քաղաքապետարանի մէջ և այլ վայրեր կարեւոր օժանդակութիւն կը բերէին:

Որքան ուրախառիթ էր նաև այն պարագան թէ Յրանս. Պատ. նախարարը Պորտո հաս



Սկստարի սկստուաներ

նելով 1916ի թիւրքօրերուն, իր գրասենեակին աշխատութիւններուն համար սկստուաներ ուղած էր, ըսելով թէ կատարելապէս կը վստահի անոնց մտացիութեան, ճշդապահութեան և խրղճին և զազանապատութեան:

Իսկ պօշտը (գերմաններ) պատերազմի ընթացքին, իրենց կեղծ սկստուաները (faux boy-scouts) գործածեցին ինչ լրտես և մատնիչ և ազտտանցին սկստութիւնը բարձր իտէպը:

Սկստիզովը և հայրենիքի սպազան.

Հիմա որ պատերազմը չաճած ենք, մտածենք և կանխատեսենք այն մեծ խնդիրը որ մեզ կը մնայ լուծել եթէ կը փափաքինք որ Ֆրանսա չարունակէ ապրիլ. Աւաղ, յարմար ժամանակն է նախ կրկնել թէ, ծնունդներու նուազումը մեծ վտանգ կը կաղ-է մեր ցեղին ապագային համար: Ասոր աւելցնենք այլքով, թօքախտի և ուրիշ տարափոխիկ հիւանդութեանց աւերները ինչպէս նաև չորս երկար տարիներու ընթացքին 3 միլիոն ընտրեալ Ֆրանսացիներու կոուսար: Եթէ ներկայ պայմանները շարունակուին 60 տարի վերջ Ֆրանսա պիտի ունենայ 20 միլիոն բնակիչ իսկ մէկ դար վերջ հազիւ 10 միլիոն Ֆրանսացի, այնպէս որ Ֆրանսա գոյութիւն ունենալէ պիտի դադրի:

Սկստարիզովը իր բարոյական ու ֆիզիքական առաքիչութիւններով կարեւոր հակազդեցիկ ուժ մըն է այս վատասերումին և անկումին:

Արդարեւ ան երիտասարդը կ'աւանդէ, իր մարմնական մտաւորական և հոգեկան ամենափափուկ վայրկեանին որ անոր մարմնին ու մտքին կակոզ մեղրամտը կ'ստանայ արտաքին ազդե-

ցութիւններն, որոնք մօտ ազագային մէջ դայն պիտի կազմեն ճշմարիտ մարդը, տկար արարածը կամ չար աննաւը:

Վաղուան Ծրանասային համար, մեզի մարգ պէտք է, որոնք գիտակցութիւնը գունդան ան մեծ ընկերային, անտեսական, գիտական, ճարտարագիտական բարդ խնդիրներու մասին, որոնք կը կատարուին մարդկային բոլոր խաւերուն մէջ: Պէտք է պատրաստել տղաքնբ'ր, մեր մարմինն ու հոգին այդ ծանր կեանքին, որ կը պահանջէ ժիր աշխատանք և հաստատ որոշում:

Այս դարը այլեւս բեմասացներու, պատօնեաներու, քաղաքագէտներու չպատկանիր: Նա պիտի փչրէ ու ոչ չսցնէ խարդախները, ծոյլերը և անօգուտները:

Ճանք ուրեմն երիտասարդութեան դաստիարակութիւն մը որ համեմատի իրեն վիճակ ուսած ճակատագրին ծանր պարտականութեան:

Ընդունինք սկառտիզմը իբր ամենէն ազդու միջոցներէն մէկը երիտասարդութեան տալու համար անհրաժեշտ խառնուածքը:

Ուրախառիթ է որ հանրային ամէն կարգի իշխանութիւնները որոնք, իրենց անմիջական պարտականութեանց կարգին ունին նաեւ ցեղին ապագան ու հայրենիքին յարատեւութիւնը հսկելու պարտականութիւն, կը փոփոքին ծանծրոյթը տանել քննելու համար սկառտիզմը, իր հիմերուն, իր մէթոտներուն և իր նպատակներուն մէջ:

Կը կարծենք թէ ոչ ոք պիտի համարձակի ծաղրական խօսքերը արծարծել, երբ տեսնէ սկառտներու անցքը: Անհրաժեշտ է սակայն սկառտական մէթոտներուն շուրջ վիճարարի տարակոյտները փարատել և անոր՝ Ծրանասայի մէջ տարածման անհրաժեշտութիւն հաստատել: Ներքի չէ սակայն, գէթ վարիչ շրջանակներու անգիտանալ դաստիարակութեան ձեւ մը որ հիմա տիեզերական յայտնութիւն մըն է և կը կիրարկուի միլիոնաւոր տղոց մէջ:

Անհրաժեշտ նկատեցի այս կէտին շուրջ այսքան ծանրանալ քանի որ յաճախ կը կրկնուին այս խօսքերը: «Մեր երկրին մէջ սկառտիզմը դեռ բաւականաչափ չէ ծանշուած: Ան միայն իր արտաքին երեւոյթով մեզ ծանօթ է»:

Ահա, թերեւս այս պատճառաւ է որ սկառտական շարժումը, մեր մէջ այնքան տարածուած չէ, ինչպէս Անգլիոյ, Միացեալ Նահանգաց, Սպանիոյ, Իտալիոյ, Նոյնիսկ Ռումանիոյ և Յունաստանի մէջ:

Եզրակացութիւն. Բոլոր անոնք որ գիտեն թ զ աննկուն բրօքականս մղել, ծանօթացնելու համար սկառտիզմը իր իրական գոյնին տակ, «Le Livre de l'Eclairer»,
(Introduction) Գ. ՇԱՊՈՅԱՆ.

ԱՆՍՈՒՆՆԵՐԸ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԽՕՍԱԿՅԻՆ

Շուներ, կատուներ եւ ուրիշ անասուններ թէեւ անկարող են մեզ նման խօսելու, սակայն ինքնուրոյն կերպեր ունին մեզի յայտնելու իրենց զգացումները: «Մեր փոքր եզրայրները» անուամբ հետաքրքրական հատորի մը մէջէն, որուն հեղինակը հանրածանօթ անասնաբոյժ մըն է հետեւեալ դիտողութիւնները մեր ուշադրութիւնը կը գրաւէ:

«Շղթայակալ շուն մը ազատ արձակէ ու իր երախտագիտութիւնը պիտի արտայայտէ շուրջը ցատկըր տելով, վագելով հոս ու հոն եւ ուրախութեան մայրերը հանելով:

«Կատուի մը վստահութիւնը գրաւէ եւ իր գոհունակութիւնը պիտի յայտնէ ծունկերուդ քսուելով կամ գրկիդ մէջ անվրդով քնանալով:

Չի մը սիրաշահէ ու երբ իր դաշտին կամ ախոսին մօտենաս պիտի վրնջէ ու երջանկութիւնը պիտի յայտնէ իբր թէ իր մարգագետնի կամ քնակալայրի սիրելի ընկերը ըլլայիր:

«Հիւանդութեան տեսն դարմանէ զանոնք, թէեւ բերանացի չեն կրնար պատմել քեզ բորբորիչ ախտերու ազդած կակիծը, կամ ծանր տենդի մը սպառիչ խնջէնքը, սակայն պիտի վարժուիս ըմբռնել եւ հասկնալ իրենց նոյնքան պերճախօս արտայայտութիւնները: Մարմնոյն հիւժիւր, աչքին աղօտ, յուզիչ նայուածքը, դէմքին լարուած արտայայտութիւնը բառերէ աւելի ճշդիւ կը քայտարեն թէ այս անասունները իմացակալութիւն ունին եւ թէ շատ սաստիկ տառապանք կըրնան կրել»:

Եթէ դուն անասուն մը կը պահես փորձով պիտի տեսնես թէ այս դիտողութիւնները որքան ծիշղ են, մանաւանդ հիւանդութեան պարագային:

Ս. ՔՈՍՏԻԿԵԱՆ

Խմբագրութիւնս կը ընդհաւորէ Տարսնի Հայ սկառտներու վարչութեան նախկին ասեճակապէս եւ «Արի» քերթին վարիչ

Պ. ԿԱՐԱՊԵՏ ՄԵՄԱՐԵՅԻ

ՕՐ. ԹԱՎՈՒՆՆԻ ԲԷՔՄԷՂԵԱՆԻ

հետ նշանախօսութիւնը, լուսագոյն ապագայ բաղձալով իրենց:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՐՇԱԽՆԵՐ



ՊՏՈՅՏ ԴԷՊԻ ԵՏԻ ԳՈՒԼԷ

Ազգ. Հիւանդանոցին տօնին օրն էր. սկաուսները բացօդեայ պտոյտ մը պիտի սարքէին դէպի Ետի Գուլէ. ես ալ ուզելով մասնակցիլ պտոյտին, երկոյնին կանուխ մը պառկեցայ, որովհետեւ առտուն ժամը Դին գերեզմանատուն հաւաքուելով 7,5ին պիտի մեկնէինք: Տնեցիներուն տղան Չարեհը որ հայ սկաուտ մըն է, ժամը Դին առնները վեր գալով զիս արթնցուց, հապճեպով պատառ մը հաց դրի բերանս ու միասին մեկնեցանք մարզարան: Կամաց կամաց տղաքը հաւաքուեցան, նախափորձերը կատարեցին և որոշեալ ժամուն զինուորական կատարեալ կարգապահութեամբ շարք կազմելով, ճամբայ ելանք փողահարներու առաջնորդութեամբ:

Բաւական քալելէ վերջ հասանք Սիրքէճի կայարանը, ուր անագին բազմութիւն մը խռնուած էր, ես ալ տեսնելով որ տոմսակս առնելու համար եթէ կարգիս սպասէի, թերևս չպիտի կրնայի հասնիլ կառախումբին. ան միջապէս գլխարկս, ջրամանս, պայուսակս ծանօթի մը յանձնելով, յանիրաւի կիշէին առջևի բազրիքին տակէն անցնելով բազմութիւնը ճեղքեցի և բռնակէի մը մէջ տոմսակս առնելով դուրս սպորդեցայ միևնոյն եղանակով:

Քիչ յետոյ սկաուտներուն հետ միասին շոգեկառք նստած էի, որուն մէջ բաւական լաւատեն անցուցինք, անոնք Հայկ. երգեր կ'երգէին. խանդավառ աղօղակներ կ'աւձ սկէին և ուղևորներուն վրայ ռազմադաշտ մեկնող հերոսներու տպաւորութիւնը կը գործէին: Վերջապէս Ետի Գուլէ հասնելով, կարգ կազմեցինք և սկսանք շարժուիլ դէպի հիւանդանոցին զիմացի պարտէզը ուր տեղի պիտի ունենար հանդէսը. սկաուտները կարգու հոն մտան բայց հազիւ թէ կարգը ինձի եկած էր տոմսակահաւաքը որ Ծռ. Հայ զինուոր մըն էր, ուզեց քիչ մը դժուարութիւն հանել. բայց երբ իմացաւ սկաուտական թեկնածու ըլլալս, զիս ալ ներս մտցուց: Քիչ մը վերջը հասաւ խմբապետը Պ. Ա. . . որ խմբակներու առաջնորդները կանչելով, անոնց կարճ հրամաններ տուաւ, տասը վայրկեան վերջ վրանները քամուած էին և բանակուած (campement) սկսած էր:

Քանի մը վայրկեան յետոյ, հասաւ նոր Այգ ֆանֆառը (որ հանդէսին տեւողութեանը գեղեցիկ կտորներ նուազեց) և որը սկաուտները,

որոնց վերապահուած էր պահակի դժուարին պաշտօնը, կը զարմանայի տեսնելով հինգ տարի Սիրքիոյ անապատներուն մէջ տառապող այս արթուն հայորդիները. որոնք իրենց կորովէն մասնիկ մը իսկ կորսնցուցած չէին և ցուպերնին պինդ բռնած կը հսկէին պարտէզին շրջապատին վրայ, պատրաստ արգիլելու այն ամէն խաբանները որոնք չուզելով տոմսակին փոխարէէքը վճարել, պիտի փորձէին պատերէն մազլցելով հանդիսավայրը մտնել:

Սիրասու ուրախութեամբ կը լեցուէր դիտելով որը տարեկիցներս, որոնք վաղը հաւանաբար պիտի դառնային հայ բանակին ծաղիկները և պիտի զիմադրէին բոլոր այն թշնամիներուն, որոնք պիտի փորձեն մեր անկախութիւնը բռնաբարել:

Երբ այս մտածումներուն մէջ թաղուած էի, ժիր սկաուտ մը գալով առաջարկեց ինձ միասին օրրան նստիլ: Բնականաբար ամիջապէս հաւանեցայ:

Հազիւ թէ անկէ վար իջած էինք, երբ ճաշի փոզը զարնուեցաւ, և ամէնը նստան ճաշելու:

Ճաշէն յետոյ տեսայ խմբապետ Պր. Ա. . .-ը, անոր ներկայացուցի խնդրագիր մը որով սկաուտ ըլլալու իմ ջերմ փափաքս կը յայտնէի և բժշկական բարորս: Պր. Ա. . . բարի եղաւ սկաուտական օրէնքներուն մէկ մասը ինձի բերանացի հաղորդելու:

Քիչ վերջը, խմբակ խմբակ մեկնեցանք Ազգ. Հիւանդանոց, զայն աչքէ անցընելու համար. հոն սա տպաւորութիւնը ունեցայ որ, Ազգին այդ տունը, դեռ շատ գուրգուրանքի կարօտ էր նախաձեռնի դառնալու համար: Անկէ յետոյ մեկնեցանք դաշտ մը փութապօլ խաղալու համար: Ճամբան անցանք մշակուած արտերու մէջէն ազատ քայլով, և հոն քիչ մը ծաղիկ հաւաքեցինք. քառորդ ժամ վերջ սկսաւ գնդախաղը որ հազիւ 15 վայրկեան տեւեց: Յետոյ նորէն կարգ կազմելով վերադարցանք Հիւանդանոց, հիւանդները զուարթացնելու հաւար, Ֆլիւթներով վերջին տողանցք մըն ալ կատարելէ վերջ մեկնեցանք հոնկէ: Այն գիշերը հանգիստ քուն մը քաշեցի մտովին շրնորհակալ ըլլալով անոնց, որոնք յղացած էին կազմիլ հայ սկաուտներու խումբերը, կը մարդէին տղաքը և երիտասարդները, ֆիզիքապէս ու բարոյապէս և կը պատրաստէին անոնցմէ պարկեշտ քաղաքացիներ և քաջ զինուորներ:

ԱՐՏԱՒԱՋԳ Ա. ԱՆՏՈՆԵԱՆ
(Սկաուտական բեկնածու)




ηυσ. 1



ηυσ. 2




ηυσ. 3



ηυσ. 4



ηυσ. 5




ηυσ. 6



ηυσ. 7




ηυσ. 8



ηυσ. 9




ηυσ. 10



ηυσ. 11




ηυσ. 12



*φ.β.
Ε. Γραμμοκωνσταντίνου*



ηυσ. 13



ηυσ. 14



ηυσ. 15

ՈՒԺԻ ՓՈՐՁԵՐ

Պատկերներով ցոյց տրուած խաղերը սկառաւորու
և մարմնամարզական ակումբներու համար հետաքրքրա-
կան և հաճոյալի ժամանցներ են: Այս խաղերը մրցորդ-
ներուն կամօքը, ճարպիկութիւնը, ձկուռութիւնը գար-
գացնելէ զատ դնդերներու բարգաւաճման մեծապէս
կ'օգնեն: Ամէնէն աւելի կամօքի տէր, ճարպիկ և զօրա-
ւորները անոնք են որոնք իրենց մրցումներուն մէջ միշտ
յաղթող եղած են: Ասոնք կրնան համազում գոյացնել
թէ մասնաւոր աշխատութեան բովէ մը անցնելէ վերջ
կրնան ապագային լաւ ըմբիշներ ըլլալ:

Արդ հետաքրքրական այս խաղերը սկառաւորները եր-
կու դատաւորներու հսկողութեան տակ կրնան խա-
ղալ պայմանաւ որ մրցորդներուն կազմը և տարիքը
իրարու համապատասխան ըլլան:

Յանկարծական դէմինը բռնելու փորձերը կ'ոսոյ
հագուստները պատռելու պատճառ ըլլալ ուստի անհրա-
ժեշտ է սքոռի բանթալօն եւ պարզ ֆլանել մը հագնել:

Մանրամասնութեանց աւելի պիտի ծանօթանանք
եթէ պատկերներուն լաւ ուշագրութիւն ընենք:

Պատ. 1.—Մրցողները գետինը կը նստին, առանց
ծունկերը կտրելու, ոտքերուն ներքանները իրարու
միացուցած եւ ձեռքերով իրար կը քաշեն. տեղէն ա-
ռաջ եկողը յաղթուած է:

Պատ. 2.—Ձեռքերին ծունկերնուն տակէն բըռ-
նած դէմ դիմաց կը նստին: Ամէն մէկուն ոտքերը քով
քով ըլլալով ոտքերնուն մատները իրար կը միացնեն:
Իւրաքանչիւրը պիտի ջանայ դեմինին ոտքը իր ոտքով
քիչ մը վեր հանել եւ կից մը գտնելով զայն կռնակի
վրայ դարցնել:

Պատ. 3.—Երկու մրցողները հունկի վրայ, ձեռ-
քերին գետինը, գլուխին վեր բռնած, կրկուքին
մէջտեղը սահման մը գծուելէ վերջ ծոծրակներէն կաշիէ
գօտի կամ չուան մը անցնել: Ամէն ոք դէմինը իրեն
կողմը կը քաշէ: Չուանը որուն գիտէն որ ելնէ խաղը կը
կորսնցնէ:

Պատ. 4.—Անոնք ոտքի վրայ մէկ ձեռքով դիբար

կը քաշեն, առանց իրարու կից եղող ոտքերը տեղէն
շարժելու: Նարժողը կը կորսնցնէ:

Պատ. 5.—Չորրորդ պատկերին նոյնն է սակայն
երկու ոտքերնին ալ ազատ կրնան շարժել: Գծուած սա-
մանին ուշագրութիւն, միւս կողմը անցնողը կը կոր-
սընցնէ:

Պատ. 6.—Հինգերորդ պատկերին նոյնն է դատա-
ւորին ազդարարութենէն վերջ դէմինին ո՛ր և է մէկ տե-
ղէն բռնելով իր սահմանը բերելու կ'աշխատի:

Պատ. 7.—Այս պատկերին մէջ շրջագիծ մը կայ,
որուն մէջ մրցողները մէկ ոտքի վրայ կեցած եւ
ձեռքերնին կուրծքերուն վրայ կապուած են: Իրենց
ուսերով իրար շրջագիծէն դուրս պիտի հանեն:

Պատ. 8.—Վերինին պէս միայն մէյ մէկ ձեռքով
իրար քաշելով շրջագիծէն դուրս պիտի հանեն:

Պատ. 9.—Ութերորդին պէս միայն երկու ձեռքով
գիրար դուրս հանել կ'աշխատին:

Պատ. 10.—Նրջագծին մէջ, մէկ ոտքի վրայ կը կե-
նան, ո՛ր և է մէկ տեղէն յանկարծական բռնելով չգիրար
դուրս հանել կաշխատին:

Պատ. 11.—Նրջագծին մէջ, մէջքերէն չուան կամ
գօտի մը կ'անցնեն, երկու ոտքի վրայ գիրար կը քաշ-
քըշեն և մէկզմէկ դէն դուրս հանել կ'աշխատին:

Պատ. 12.—Նրջագծին մէջ, երկու ոտքերը գետի
նը ձեռքերնին կուրծքերնուն վրայ ծալած ուսով գի-
բար կը հրեն: Նրջագծէն դուրս ելլողը պարտուած է:

Պատ. 13.—Մրցողը մէկ ձեռքով դէմինին վզէն
իսկ միւս ձեռքով դէմինին թիւէն կը բռնէ: Դատաւո-
րին ազդարարութենէն վերջ կը ջանան իրար վերցնել:

Պատ. 14.—Դէմ դիմաց կը կենան, ազդարարու-
թենէն վերջ յանկարծական իրար բռնելով մէկզմէկ վեր
հանել կ'աշխատին:

Պատ. 15.—Երկու հոգի տակը, ասոնց ուսերուն
վրայ մէյմէկ հեծնողներ: Վրայինները կը ջանան գիրար
վար առնել:

Մեծօրին

Մատուցեալ պէս

ՀԱՅՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Յաջորդ քիւով գեղեցիկ յիշատակներով հա-
մեմուած գրութիւն մը մասնաւորապէս ՀԱՅ
ՍԿԱՌՈՒՅԻ համար գրած Պ. ՄԻՆԱՍ ՉԵՐՔԻ
կողմէ:

ՍԻՐԵԼԻ ՍԿԱՌՈՒՅ ԱՄԷԷՆ ԱՄԻՍ մեկ տա-
րեկից հայ պատանի համոզի քու անմեղ խօսե-
րոյնք եւ զայն արձանագրեչ տու քու մասնաճի-
ղիդ սխառտակակ շարժերուն մեջ:

Հ. Մ. Ը. Մ.ի Մագրի-գիւղի մասնաճիւղը
ցաւակցութիւններ կը յայտնէ իր վաղեմի
անդամներէն Նուպար Գարակոզեանի իսուր
մանուան առքի իրեն մօր եւ պարագաներուն:

ԱՄԷԷՆ ամիս երկու «ՀԱՅ ՍԿԱՌՈՒՅ» քերք
ժախի քու մեկ քարեկամիդ: քու զարգախարիդ եւ
քու Միտրեանիդ սիրոյն համար:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

*. Le Manuel des boy-Scout d'Amérique անուն գիրքը առաջին անգամ հրատարակուած է 1910ին: Մինչև 1920. քսան անգամ ազգազրուած է և ծախուած է ընդամէնը 1 265 400 օրինակ:

*. Հոսմի սկսուածներս պատուիրակո թիւնը ընդունուած է Ումպէրթօ Իշխանին ներկայութեան և անոր նուիրած է իրենց արշաւներու կեանքը ներկայացնող քարթ-բոստալներու երչու ալպօմ:

*. Ամերիկա Քօրինա չաղաքի սկսուածները քիրացած են ժողով դեան հանգսնակութեանը շինուած և բոլոր կազմուածքներով կա հաւորուած մարզարանի մը:

*. Կալէսի Իշխանը, որ Կալէսի սկսուածներուն պետն է, իր Քանաուա ըրած ճամբորդութեան միջոցին, այցելած ու քննած է տեղւոյն սկսուածները որոնք շատ ջերմ ընդունելութիւն ըրած են:

Միացեալ Նահանգաց մէջ ալ նոյնպէս ընդունուած է: Իշխանը ամերիկացի սկսուածները հրատարած է 1920ի Անգլիոյ մէջ տեղի ունեւալիք Jamboreeի հանդէսներուն: Պատուցած են (200) սկսուածներէ կազմուած պատուիրակութիւն մը զրկել: Իշխանը շարունակելով իր ճամբորդութիւնը պիտի այցելէ նաև Նոր-Չեյանաւայի և Աւստրալիոյ սկսուածներուն:

*. Հովաի կղզիներու կառավարիչը, սչաուաներուն արամադրած է. 26 հէքթար տարածութեամբ գետին մը, որ անոնք պիտի սկսած են արդէն մեծ ծառերու կոճղերով իրենց բնակարանը շինել: Իրենք իսկ կը կտրեն այդ ծառերը և կը փափաքին ամէն պիտոյք իրենց միջոցներով հայթայթել: Այս առթիւ արդէն հոն կը բանակին:

Տրուած գետինը շատ յարճար է բնութիւնը ուսումնասիրելու ինչպէս նաև սկսուածկան կեանքի բոլոր վարժութիւններուն համար:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՆՈՒԱԳԱՆՈՒՐԵՐ. - Կարգ մը սկսուածական խումբեր ունին իրենց կադրեալ նուագախումբը, այսպէս Լի քսէնպուրկի սկսուածներու նուագախումբը մեծ համբաւ ունի: Թերթերը անոր մասին այսպէս կը գրեն «Երբեք չենք իմացած ամաթէօններէ կազմուած նուագախումբ մը որ համար այդ նուագախումբին կատարելիութեան»:

Այս օրքէսթրը վերջին Յուն վարին, մեծ յաջողութեամբ նուագից Լի քսէնպուրկի թաղապետական շէնքին մէջ կազմակերպուած պապարի հանդէսին:



Բերայի սկսուածներ

ԲՈՂՈՆԻՈՅ սկսուածական կազմակերպութիւնը կառավարութեան կողմէ իբր ազգային հաստատութիւն նկատուած է, իսկ կրթական նախարարութիւնը հրահանգած է որպէսզի Բոլոնիական վարժարաններու մէջ սկսուածական խումբեր կազմուին: Նոյնը կատարուած է նաև Սպանիոյ մէջ:

ԳԻՏԱԿԱՆ ՓՈՒՔՐ ԼՈՒՐԵՐ

Անրեղ հեռաձայնի հետաքրքրուչարժ փորձեր կը կատարուին Անգլիոյ և Միաց Նահանգաց միջև: Այս փորձերը լաւ արդիւնք պիտի տան: Նախագահ Ո սիլւըն, փորձ-Ուաշիկթօն շոգենաւին կամրջակին վրայ մինչև 500 մղոն, հեռաւորութեան միջոց հեռաձայնական հաղորդակցութեան մէջ մնաց անթեղ հեռագրի կայանին հետ: Կլիսսիթի ի մօտոյ անթեղ հեռաձայնի կայաններ պիտի հաստատուին Ատլանտիկ և խաղաղականի ծովազդերքներուն վրայ:

Տեղի Մեյլ կը գրէ թէ Մ. Մարգօնի մօտերս էլիէյքա գրօսանաւով, մեծ հեռաւորութիւններէ անթեղ հեռագրի և հեռաձայնի փորձեր պիտի կատարէ — ան պիտի քննէ նաև այն հետաքրքրուչարժ նշանները որոնք ստացուած են կարգ մը կայաններու կողմէ և որ կը կարծուի թէ ուրիշ մոյորակէ մը կուգան:

ՉԻՒՆԸ ՀՈՒՆՅՆԵԼՈՒ ՀԱՄԲՐ

Պատերազմի մասնակ եղած գիւտերէն քանի՞ քանիները արդեօք գործողութեան պիտի դրուին խաղաղութեան ժամանակ:

Բոցարձակերը (lance flamme) մեծ կարե-

ւորութիւն կ'ստանան: Վերջին փետրին Միաց-
եալ Նահանգաց մէջ, զինուորներու խումբ մը,
բոցարձակներ ի ձեռին զրազեցան աւելլու Նիւ-
Կորքի փողոցներուն մէջ գիզուած ձիւնը:

ՍԿԱՌԻՏՆԵՐԸ ԲԱՆԱԿԻ ՄԷՋ

Սկաուտական շարքերու մէջ տարիքով յա-
ռաջացածները հետզհետէ կը բաժնուին իրենց
խումբերէն երթալ կատարելու համար զինուո-
րական պարտականութիւնը: Մեր կատարելիք
ամէնէն լաւաչոյն մաղթանքը այն է որ իրենց
իտէալ սկաուտ սկան կէսնքը շարունակեն բա-
նակին մէջ ևս, ուր անոնք բազմաթիւ ու իրա-
րու հակասական ազդեցութեան տակ կը դժուարին
և յետոյ վերադառնան լաւ խորուած ու պա-
տրաստակամ սորվեցնելու իրենց երիտասարդ
ընկերներուն, ինչ որ շահած են:

Որպէսզի անոնք շարունակեն սկաուտ մնալ
և կամ թէ մեր այդ շարժման միշտ հետաքր-
քիր գտնուին, կը կարծենք թէ անհրաժեշտ է
անոնց ստեղծել միջոց, որպէսզի շարունակեն
մեզմով հետաքրքրուիլ միշտ յարաբերութեան
մէջ մնալով իրենց խումբերուն կամ իրենց
սկաուտ ընկերներուն հետ որոնք սկաուտական
ուրիշ խումբերէ եկած են ժամել միևնոյն բու-
նակին կամ միևնոյն զօրանոցին իջ:

Կը կարծենք թէ այս գաղափարը դրապէս
գործադրելի է: Անհրաժեշտ է բանակի մէջ մրա-
նոզ սկաուտներու հասցէն կեդրոնացնել և զու-
նոնք իրարու հետ յարաբերութեան մէջ մտցնել:
Այսպէսով սկաուտը որ պիտի գտնէ վատանկի
ընկերներ որոնք հետնա պիտի կարենայ տեսակ-
ցիլ, պատիլ և այլն: Եթէ կարելի ըլլայ և զինուո-
րական իշխանութիւնը համակերպի, աշխատե-
լու է զանոնք բանակի միևնոյն խումբին մէջ
հաւաքել: Այսպիսի համախմբում մը լաւ օրի-
նակ պիտի լինի և տարակոյս չկայ թէ զին-
իշխանութիւնն ալ այս պարագային պիտի գտնէ
իր օգուտները:

Ուրեմն զինուորագրուած սկաուտներուն
անհրաժեշտ է թելադրել որպէսզի միշտ իրենց
զօրանոցի քաղաքին սկաուտական խմբակին հետ
հաղորդակցութեան մէջ գտնուին: Վստահ ենք
թէ անոնք եղբայրորաբար պիտի հիւընկալուին և
մերթ պիտի կարենան անոնց օժանդակել:

Երեւանի սկաուտները Ապրիլի մէջ հանդանակա-
թիւն մը կատարելով 300 հազար բուլղի հաւաքած են:

* * * Խաղաղիկ Լ. Մ. Բ. Մ. Ի մասնաճիւղի սկա-
ուտներու երդման արարողութիւնը տեղի ունեցա գի-
ղին ժողովարանին մէջ:

Արարողութեան կը նախագահէր Գնել Եպիսկ. որ
խրատականէ վերջը հրաւիրեց սկաուտները կատարել ի
բնոց երգումը: Որով վերջ Լ. Մ. Բ. Մ. Ի կեդրոնի կող-
մէ խօսեցաւ Գ. Հայկ ձեռնէ՛տեան իր պարզ ճշտութեամբ
որ իրեն յատուկ է, շատ դեղեցիկ և յուզիչ կերպով վեր
հանեց հայ սկաուտին նպատակը և անոր աւելե գրա-
նուած դժուարութիւնները:

Գեղեցիկ կերպով արտայայտուեցան Գ. Գ. Միտակ
նախաձեռնան և որբանոցի տնօրէն, Հրանդ Տէր Անդ-
րէասեան որոնցմէ վերջ խօսք առաւ Տ. Գնել Եպիսկո-
պոս և հայ դքսը որհնելով տուալ խմբակտիս ընելով.
«Աստուծոյ նշանը խաչն է իսկ Ազգինք՝ դքսը, սէս այս
դքսակը և զայն բարձր բունէ, հայրենիքը շատ բան
կ'սպասէ ձեզմէ. . .»

Ներկայ էին երկու Անգլիացի սպաներ, որոնցմէ
գնդապետ Մր. Անտրուս անցուց սկաուտներուն ուսի
ծառուէնները:

Հանգէտի միջոցին տեղի ունեցան երգեր և արտա-
նախութիւններ:

* * * Մեր շնորհակալութիւնը մեր Ամերիկացի սկաուտ
եղբայրներուն որ Լոս Անճելէսի մէջ ի նպաստ Հայաստա-
նի հագուստ հաւաքելու գործին աջակցած են տրամա-
դրելով իրենց ընդարձակ սրահը հայ նպաստամատոցին
և իր անդամները դրկելով տունէ տուն հագուստ հա-
ւաքելու համար:

ԿԻԼԻԿԷԱՆ ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐ

Երբ մէկ կողմէն Կիլիկիոյ Հայութեան սպառնացող
վտանգը հետզհետէ աւելի կը տարածուի, միւս կողմէն
Պայութիւնը, անվե՛ներ և կորովի կերպով կը շարունակի
իր զարգացական գործունէութիւնը:

Կիրակի կէս օրէն յետոյ Արգարեան վարժարանի օր-
րոյթին մէջ տեղի ունեցող հանդէսը մեծագոյն ապացոյցն
է Հայ ցեղին վատաւոր կենսունակութեան, Հակասակ
Կիլիկիոյ զանազան կողմերէն աւելուած ոչ-այնքան մը-
խիթարական լուրերուն, վարժարանին շրջափակը հա-
զարտուր հանդիսատեսներով լեցուած էր, որոնք եկած
էին զիտելու Ատանայի Հայ-սկաուտներու առաջին յա-
ջողութիւնները:

Հանդէսին յարգելի նախագահին, Տիար Տամատեա-
նի շուրջը նստած էին Ֆրանսացի սպաներ և Յոյն ներ-
կայացուցիցներ, ինչպէս նաեւ Ազգ. իշխանութեանց և
զանազան միութեանց ու կուսակցութիւններու ներկա-
յագուցիչները:

Տոգանցքը և անոր յաջորդող երգումի արարողու-
թիւնը շատ լաւ տպաւորութիւն թողուցին ներկաներու
վրայ, որով յետոյ Տիար Տամատեան ոգիւր եւ ազգու-
բանաստեղծութիւն մը ըրաւ, շեշտելով մասնաւորապէս
նիթաթան օյժին կարեւորութիւնը, քսելով թէ՛ վերջին
խօսքը նիթական օյժինն է հակառակ այն յայտարա-
րութիւններուն որ ասկէ յետոյ արդարութիւնն ալ իրա-
ւունքը միայն պիտի տիրակալուին, Տիար Տամատեանի
բանաստեղծութենէն յետոյ որ ջերմապէս ծափահարուե-

ցաւ, սկսուտ մը արտասանութիւն մը ըրաւ, որուն յաջորդեցին Չուա՛ի եւ Հաւկիթի խաղերը, եւ վազրի մը ցումը, Դգալներու մէջ գրուած երկու հաւկիթը առանց գետին ձգելու վաղիւրով որոշ տեղ հասնելու մըցումին մէջ առաջնութիւնը շահեցաւ Պ. Խաչիկ Խաչատուրեան, բ. եկաւ Պ. Յրթ. Գունտուրաճեան. Վազյի մըցումին մէջ առաջնութիւնը շահեցաւ Պ. Ռուբէն Տէր Առաքելեան.

Հանդէսին բ. մասը սկսաւ հայ սկսուած երու վարչութեան Ատենապետ Պ. Գ. Աստուածատուրի բանախօսութիւնով, որուն յաջորդեցին Պարկի Բուրգի եւ Կոշիկի խաղերը, Առաջնութիւնը շահեցան՝ առաջինին մէջ՝ Պ. Յովսէփ Եաղչեան՝ երկրորդին մէջ՝ Պ. Յարութիւն Նազարեան. Պ. Եփրեմ Տամբաճեան երրորդ եկաւ. Դրոշակախօսութիւնով երկու հեռագիրներ փոխանակուեցան, մին կ'ըսէր. «Մեր պաշարուած եղբայրներուն օգնութեան հասնինք», իսկ երկրորդը Հայաստանի հանրապետութեան յարգանք յայտնելով իր սկսուածներուն յայտնութիւն կը մաղթէր, Յետոյ հայ սկսուածներու պետը Պ. Իշխանեան արտասանաչափեան մէջ առաջնութիւն մը ցոյց տուող սկսուածներուն պատուանշաններու աստիճաններ բաշխեց. Պ. Վ. Արծրունիին կարճ մէկ բանախօսութիւնով վերջացաւ հանդէսը շատ հաճելի տպաւորութիւն մը թողով բոլոր հանդիսականներուն վրայ.

ՀԱՅ ՉՈՅՆ

ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՒՄ

Խոսք խիցի. — Երբ խից մը շիշին բերանին չյարմարի շատեր զայն կը տաշեն. Այս միջոցէն աւելի լաւ է խիցը սեղանի մը վրայ դնել եւ զայն տախտակի կտորի մը տակ, զօրաւոր կերպով ճնշելով զլտորել եւ զայն անմիջապէս շիշին բերանը զետեղել.

Եիւ մը կարելու միջոց. — Դիւրութեամբ կարելի է կտրել շիշ մը հետեւեալ միջոցով. Հարկ չկայ ազամանդ գործածելու.

Քուրդի թել մը թաթխեցէք քարիւղի մէջ.
Կապեցէք զայն շիշին բոլորտիքը, այն տեղէն ուրկէ կ'ուզէք կտրել վառեցէք բուրգը, երկրորդ մը կամ երրորդ մը եւս վառելէ վերջ, շիշը դրէք պաղ ջուրով լցնուած ամանի մը մէջ եւ պիտի տեսնաք որ ձեր շիշը մարուք կերպով երկու կտոր եղած է.

Պտույտի ժամանակ եթէ կ'ուզէք հանգչիլ, աւելի լաւ է ոտքի կենալ քան թէ նստիլ.

ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Կասողած օսու մը բռնել. — Այն սկսուտը, որ խմբապետը կ'ընտրէ, կատղած շուն ըլլալու համար, իր կոշիկներուն տակ կը քամէ մասնաւոր ձեւով երկաթներ, կ'առնէ պզտիկ քարեր եւ ճ հատ թուղթէ գնտակ, որսորդները իրմէ կէս ժամ վերջ կը մեկնին իր հետքերուն վրայէն, իւրաքանչիւրը զինուած միայն մէկ

թուղթէ գնտակով. Շունը կ'երթայ ուր որ իր ընազը զինքը կ'առաջնորդէ, քայց երբ հողը շատ կարծր է, քանի մը պզտիկ քարեր կը ձիէ իր հետքը ցուցնելու համար, Երբ հետեւողները կը հասնին շան թագստոցին մօտ, այս վերջինը կը նետէ իր թուղթէ գնտակը երբ, երբ որսորդ մը մէկ անգամ զարնուի կը մեռնի, սակայն շունը պէտք է երբ անգամ զարնուի մեռնելու համար. Թուղթէ գնտակ մը միայն մէկ անգամ կրնայ նետուիլ.

Ծակօք. — Վերոյիշեալ խաղը զոր բաղած ենք Պէլ Տիրայի սկսուտ թերթէն, շատ լաւ վարժութիւն մըն է, հետք ճանչնալու եւ անոր հետեւ ելու փորձին. Ինչ որ երկրորդ կարգի սկսուածութեան պայմաններէն մին կը կազմէ.

Առիւծի որսորդութիւնը. — Այն տղան՝ որ առիւծի գերը պիտի ստանձնէ՝ կ'առնէ կանխաւ իւր հետը հունտեր եւս, եւ թէնիսի վեց հատ գնտակ, կէս ժամ առաջ ծամբայ կ'ելլէ իր ուզած տեղը երթալու համար ձամբան պէտք է 10-15 բոյլը անգամ մը հունտեր ձգէ որպէսզի իր հետքը կարելի ըլլայ տեսնուիլ. Յետոյ որսորդները իւրաքանչիւրը մէկ մէկ գնտակով զինուած հետքերուն կը հետեւի, Եթէ անոնք որոշեալ ժամանակի մը մէջ չկարենան առիւծը գտնել, յաղթուած են. քայց երբ որսորդները առիւծին որջին մօտենան, այս վերջինը իր գնտակները կը նետէ.

Ամէն զարնուած որսորդ մեռած կը սեպուի եւ չի կրնար վերստին գնտակ նետել.

Եթէ առիւծը զարնուի որսորդներու գնտակէն վիրաւորուած կը նկատուի, իսկ եթէ 3 անգամ վիրաւորուի՝ մեռած.

Իւրաքանչիւր գնտակ մէկ անգամ միայն կը նետուի.

Ամէն սկսուտ իր նստած գնտակը վերցնելու է. 2 մեռ առնել փոխանակ գնտակով խաղալու, կրնան ձիւնագնտակով խաղալ.

Խմբակներու միջև կռիւ. — Երկու խմբակ այս խաղին կը մասնակցին. իւրաքանչիւրին զէմը կը զրտնուին այնչափ աղիւսներ որքան տղայ կայ թշնամի խրմբակին մէջ. Հրամանը տրուելուն պէս երկու խմբակները կը կրակեն (քարերով).

Շահող խմբակը կը նկատուի ան որ առաջին անգամ զէմի բոլոր թշնամիները մեռցուցած է (բոլոր աղիւսները զլտորած).

Ճագարներու ու օսուները. — Երկու կամ աւելի խաղացողներ կը ներկայացնեն ճագարները. անոնք քիչ մը առաջուց ճամբայ կ'ելլեն եւ կը վագեն բաւական ատեն, ձգելով միանգամայն հունտեր կամ կոպիճներ, որպէսզի հետքերնին յայտնի ըլլայ. յետոյ ուրիշ ճամբով մը բանակատեղին կը վերադառնան, Շունները՝ որոնք ճագարներու մեկնելէն քիչ ետքը ճամբայ ելած են, պարտին զանոնք բռնել իրենց տեղը չհասած.

Փնտրեցէք. — Խմբապետը, արշափ տանելէ առաջ իր սկսուտները, կ'ընտրէ կարգ մը առարկաներ զորս կը թուէ անոնց, եւ իւրաքանչիւր տեսակ առարկայի մէկ մէկ արժէք կուտայ. Այսպէս՝
1 նիշ զանուած լուցիկի մը համար
1 » » կոճակի մը համար
2 » » թուղթի հետքի մը համար

- 2 նիշ տեսնուած մոխրագոյն ձիւ մը համար
- 2 » » թուշոյ աղանիի մը համար
- 2 » » ծիծեռնակի մը համար
- 1 » » ճաթած ապակիի մը համար

Սկառտները պարտաւոր են սոյն առարկաներուն նմանները զանելու Ամէնէն շատ նիշ ունեցողը կը շահի:

Գեապանները. Խաղացողները երկու բանակի կը բաժնուին, կամ իւր արանջիւր խումբ առանձին տեղ մը կ'երթայ կը հաւարուի:

Խումբերը հաւաարապէս բաժնուած պիտի ըլլան: Ամէն բանակ իր մէջէն իր զեւպանը կ'ընտրէ. երկու տարբեր խումբերու զեւպանները ծածուկ բառ մը կ'որոշեն մէջերէին (առաջկայ, անձ պատմական դէպք եւն.) եւ որ միւս իտպաց զները պէտք են գուշակել:

Ա. խումբէն զեւպանը ք խումբը կ'երթա եւ փոխադարձաբար, խումբին անդամները հարցումներ պիտի ընեն որոնց «այո՛» կամ «ոչ»ով միայն պիտի պատասխանէ:

Այն խումբը որ ամէնէն առաջ կը գտէ անունը կամ գուշակելի բառը՝ կը շահի եւ կը տիրանայ հակառակորդ խումբէն զեւպանին իրենը հառաւելէ վերջ, հոնկէ. Այս պէս կը շարունակուի ըստ կամս:

Սոյն խաղը եթէ մէթօտիկ կերպով խաղացուի՝ այսինքն՝

1. Հաւ դասաւորելով հարցումները.
2. եղած հարցումները լաւ ըմբռնելով.
3. Աւելորդ հարցումն չ'ընելով.
4. Տրամաբանելով.

Շատ զիւրին պիտի գայ խաղացողներուն, որոնք հարցումներու պատասխանել ղժուարին կը կարծէին սկզբան:

Թարգ «Le Livre de l'Elaineur», հե
1. ՄԷՆՁԻՆՆԱՆ

ՆՈՒՄԱՆՆԵՐ

Վառնա 25 փետր 920

...Մենք հոս ամէն միջոց ի գործ դրած ենք որպէս զի կարենանք խտայնել մեր շարքերը անբծ պատանիներով եւ կ'աշխատինք անոնց բարոյական եւ ֆիզիքական զարգացմանը:

Շրեղ երեկոյթի մը սարքուած հայ երիտասարդաց «Ինքնագարգացում» միութենէն, տեղւոյն, Պոյ սկառտները առաջին անգամ հրապարակ ելան շնորհակցանակներով եւ հրեղէն լախտերով, որը նորութիւն մըն էր վառնայի Հայութեան համար. եւ մեծ ազդեցութիւն ըրաւ ժողովուրդին վրայ, եւ անդամիկ քայլերնիս մեծ քաջալերանք գտաւ: Սկառտներու թիւը այդ երեկոյթէն յետոյ բարձրացաւ, յոյս կայ որ ըստ օրէ անելու իսկ փետր. 19ը պատմական օր մ'ընէր տեղւոյս սկառտներու համար, ազգային մեծ տօնի օրը, որոշուած էր տօնելու Հայաստանի անկախութեան ծանաչութիւնը եւ Նշանակելի զայն հայ բանակի օրը: Նոյն օրը մեր սկառտներէն հինգ հոգի տուին իրենց սկառտական երգումը եկեղեցական արարողութենէ յետոյ:

Այս ծնունդը աւելի ընդլայնելու համար պէտք ունինք հայերէն հրահանգներուն, որոնց պահատութիւնը

զգայի է. Հոտ Ռուսիայէն եկած մի քանի ուսուսկառտներ կան, որոնցմէ ստացայ հրահանգներ, ուստի, ինզորեմ հրահանգներ եւ վարժութիւններու ցանկեր զրկեցէք մեզ: Եղբայրական բարեւեներով մարզիչ վառնայի սկառտներուն:

Մ Գ. ԱՅՏԱՐՃԵԱՆ

Իզմիր 13 Մարտ 920

Պատ. Խրաղարարիւն «Հայ Ակադեմի»

Կ. Պոլիս

CAMPING (ԲԱՆԱԿՈՒՄ)

Իզմիրեան սկառտիզմը տախտ առ տախտ դրական ուղղութիւն մը ընդլայնելու վրայ է մանաւանդ քանի մը բանակներ բաղորովին թօթա ինչով լրենց հին գրութիւնը սկսած են նետելի նոր ուղղութեան մը որ շատ աւելի պիտի ծառայէ մանուկին բարոյական զարգացման քան հինը:

Չատիկի օրը Յոյ բա՛ակը camping (բանակում) մը կազմակերպած էր զէպի Սինէրլիի բարձունքը որուն ճիշդ դիմացը կ'երկարի հայոց գերեզմանատունը, Չափազանց հասոյալի էր տեսնել այդ սկառտական խումբը. երբ կ'անցնէր Իզմիրի փողոցներէն իրենց բոլոր camping պիտոյքներով, եւ ծիով որ բնունաւորուած էր վրաններով եւ ամաններով Շատեր ու շատեր մանաւանդ պատու կիներ վերցան զսպել իրենց արցունքը, ուրիշներ իրենց սխալ ըմբռնումով կ'ըսէին «կը տեսնե՞ս կոր հայկական զինուորները»:

Վերջապէս երկար ճամբայէ մը վերջ խումբը հասաւ որոշուած վայրը ուր անմիջապէս վրանները գետնառեցան ու ամէն սկառտ իր պարտականութեան բաժինը ստանձնելով սկսաւ իր աշխատանքին:

Գերերջանիկ էակներ, հեռու քաղաքին մխորէն քրնութեան ազատ ծոցին մէջ, հիւրընկալ ու կակուղ քարին վրայ, ապրիլ ու մեռնիլ. կ'ըսէ բանաստեղծը:


Արեւը կ'սկսէր մարը ժամել երբ դրօշի փողը կը հնչէր եւ սկառտները քով քովի մի շարք կը բարեւէին եւ ապառնին իջնալը կայմին վրայէն. փողը կը հնչէր տախտին ու կ'արթնցնէր մեր սրտերուն մէջ յոյսը, հաւատքը եւ սէրը հանդէպ Անոնց որ նահատակուեցան հայրենիքի իտէպիս համար:

Գարզը եկաւ ճաշին կեբակուրը պատրաստ էր աղօթքը կատարելէն վերջ ամէն որ կը նստեր ամաններու շուրջ ուտելու համար այն ճաշը որ իրենք պատրաստած էին իրենց ուրոյն միջոցներով...

Ճիշդ ժամը լին ննջելու փողը կը հնչէր եւ ամէն սկառտ իր անյողինը պատրաստելով կը հանգէր հոն իսկ պահակը իր անվախ կեցուածքով կը շրջէր վրանին շուրջը պահպանելով խումբը ամէն պատահական զիպատածներէ մանաւանդ անմիջապէս լուր տալով իր շուրջը տեղի ունեցած զէպրերը:

Նոյն օրը յունական կառավարութիւնը Չատիկի առթիւ բոլոր յոյն զինուորներուն խրախմանութիւններ սարքած էր. զիւրիւրէն բաւական զինուորներ քաղաք իջած էին ներկայ գտնուելու համար այդ հազարապետ կերտխումբին որ տեղի պիտի ունենար կարգ մը վայրերու մէջ. յաճախ պահակին ազգաբարձեան վրայ արթննալով կը վազէին օգնութեան երթննալով ճամ-

ՄԱՐԶԱՇԽԱՐՀ



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

1920 Օգոստոս ամսուն, Անվերսի մեջ տեղի ունենալիք միջազգային Ողիմպիական խաղերուն հետեւեալ ազգերը պիտի մասնակցին. Կեղրոնական Ամերիկա, Արժանթին, Աւստրալիա, Պէլճիզա, Պրագիլիա, Գանատա, Չիլի, Տանիմարգա, Եգիպտոս, Միւնացեալ Նահանգներ, Էքուաթոր, Սպանիա, Ֆինլանտա, Ֆրանսա, Մեծն Բրիտանիա, Յունաստան, Հոլանտա, Իտալիա, Ծարոն, Լիքստէնպուրկ, Մէքսիկա, Մոնագո, Նորվէկիա, Նոր Զէլանտա, Բերու, Լեւաստան, Բորգուկալ, Ռումանիա, Ռուսիա, Սերպիա, Հարաւային Ափրիկէ, Շուէա, Չուիցիերիա և Չիլո Սլովագիա... Աստուած մեզ պահպան... ամէն ջարդի ցանկին մէջ Հայերուն տեղ կը արուի... որովհետեւ Ասիոյ լեռները... արածող ազգ մըն ենք իսկ առ այժմ կը մերժուինք միջազգային խաղերու մեր մասնակցութիւնէն որովհետեւ Եւրոպական ազգ մըն ենք!!! եղբր: Հ. Մ. Ը. Միտիթիւնը պաշտօնական նամակով մը ասկէ երկու ամիս առաջ պաշտօնապէս Անվերսի կեդր. Վարչութեան իմացուցեր է եղբր թէ Հայաստան իւր մտադիր է 10ի չափ մրցորդներ ղրկելու այդ առթիւ մանրամասնութիւններ կը խնդրէր: Ասոր ի պատասխան, լսեցինք թէ Միջազգային Ողիմպիական խաղերու Անվերսի մասնախմբին հասած է պաշտօնական գրութիւն մը, որուն մէջ կ'ըսուի թէ, կը ցաւին որ Հայաստանի մասնակցութիւնը անկարելի նկատուած է Ընդհ. Ժողովի կողմէ, որովհետեւ Միջազգային Ողիմպիական Խաղերու կանոնագրին 1 յօդուածին համեմատ նոյն խաղերու մասնակցութիւնը մոտ անկարելի ունեցող ազգերը մասնակցութեան իրաւունք ունին և միայն բացառութիւն կը կազմեն Եւրոպայի դուրս գնուող ազգերը: Ուրեմն ասկէ կը հետեւցուի որ... եթէ Հայերս Եւրոպական!!! ազգ մը եզրած ըլլայինք, առանց ներկայացուցիչ ունենալու պիտի կարենայինք մասնակցիլ: Այժմ մենք... Ասիական հպատակութիւնը... ի ծնէ... ընդունած ըլլալով, մեր կրկին բացատրողական գրին ի պատասխան, կը յուսանք որ այդ աշխարհագէտ մասնախումբը ընդունի Հայերու Ասիական պետութիւն մը ըլլալը և հաճի արտօնել մեզ որ

լան կորսնցուցած զինուորի մը եւ զանոնք իրենց հետեւեալ պահակները կ'առաջնորդէինք, անոնցմէ մէկը շատ յոգնած ըլլալով ստիպուեցանք զինք հանգչեցնել մեր վրանին տակ:

Յաջորդ անաւտ ի փոխարէն այս բարիքներուն որ սկառաւներու պարտականութիւնն է, բանի մը հէլէն ուկաներ եկան իրենց շնորհակալութիւնները յայտնելու համար սկառաւներուն. անոնցմէ մին զմեզ բացալիւցու ըսաւ. «Ապրիք զաւակները, մենք եւ դուք չարչարուեցանք, բայց հիմա մեռք մեռք տուած պիտի աշխատինք մեր հայրենիքը շինելու համար»:

Անաւտ էք, գեռ արշարայը չի ծագած արթննալու փողը կը հնչէր եւ ամէնքս ոտքի կանգնելով կ'երթայինք յաւացուելու նախաճաշ, մարքութիւն, դրօշ, զուարճութիւն, պօքս, սուսերամարտ եւ այլն իրարու յաջորդեցին, Գիմացի գերեզմանոցը կ'սկսէր լեցուիլ խուռներով բազմութեամբ որ կը հպարտանային երբ կը տեսնէին հայ եւ ազոյնին ծածանումը դիմացի բարձունքին վրայ:

Օրը շատ գեղեցիկ էր եւ ամբողջ օրը անցաւ շատ հաճոյալի, մանաւանդ երբ սկառաւական ուրիշ բանակներ այ եկան միանալ մեզի:

Իրիկուն ամբողջ բանակները կը վերադառնային բազար մեծ գոհունակութեամբ մը:

Մեծ ուրախութիւն մը, մանաւանդ հզարտութիւն մը կ'զգում երբ կ'սկսիս թղթատել «Հայ սկաւտա» օրի նակները, եւ երբ կը գիտես թէ զգալի յառաջդիմութիւն մը կայ նոր թիւերուն մէջ զէպի կատարելալործութիւնը սկառաւական ազնի գազափարներու, Մանաւանդ մեր թերթին համար դուրատալից տողեր կ'ստանան այն ամէն օտար սկաւտա բարեկամներէս որոնց յաջորդաբար «Հայ սկաւտա» կ'ուղարկեմ. նոյն իսկ անոնցմէ մին Անգլիացի մը իր գրած նամակով հետեւեալ նախապատճիւնը կը գրէ. «Հայ սկաւտա, զրկած «Հայ սկաւտաներուց մէջ միայն կարողացայ ճանչնալ, երբ մանաւանդ անոնցմէ մէկուն մէջ տեսայ Գիդ-Կարտերու յուսանալորդ, խորհեցայ թէ ինչպէս յառաջդիմել էք սկառաւակի մէջ»:


Արի՛ մը կը գրէ ինձ. «Ըրկած «Հայ սկաւտաները ինձ այնքան հիացում ազգից, որ անցեալ օրը քան քամրոյն ժամանակ անոնցմէ մին տարի chief Գառնի Թաուէլի ցուցնելու. բացաւ. տեսաւ իր Փօթօն եւ զարմացիտ բացազանցեց «Bravo the Armenian scouts...» սեւաւք, պրաւօ մը շահեցնել տուի մեզ և Baden-Paenl bravo մը! այդ օրը գաշիկնակիս կապը բակեցի, որովհետեւ բարի գործ մը կատարած էի:

Երբ այսպէս օտար սկառաւներ կը գովեն մեր ազնիւ ձեռնարկը, մեզ կը մնայ պարզապէս խոնարհիլ մեր գաղափարականին տուելու:

Այս պատճառաւ անաւտ միշտ կը փափաքեմ աւելի շատ օգտակար ըլլալ մեր աշխատանքներուն, եւ կ'ողբմ որկել մեզ օտար սկառաւական հանդէսներու մէջէն բացուած թարգմանութիւններ:

Վստած եմ որ մեծադէմ պիտի նպաստէ սկառաւ պատանիի մը pratique գործունէութեան:

ԶԱՆԻՆ



հիւսիսը չտփենք պարզապէս նոր աշխարհ մը տեսնելու նպատակով: Արդար ըլլալու համար ըսենք թէ՛ Հայերուս կողմէ իրենց ուղեւոր նախկին վրայ Պոլսոյ հասցէն տրուած ըլլալով, Պոլիսը թերեւս Հայաստանի առժամեայ մայրաքաղաքը նկատուած են!!!... թերեւս գալո՞ւնի որոշում մը կայ ու մենք... չենք զիտեր միամիտ ներս:

ՖՈՒԹՊՈՒԸ ԵՒ ԱՆԳՆԻՍՏՆԵՐ... ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

Մօտատենէն Անգլիոյ խորհրդարանը, ֆութպօլի ընկերակցութեան բազմաթիւ վրայ, պիտի զբաղի սրբական խաղերու մէջ բռնագրաւեալու դէմ արգելիչ օրէնքներու պատրաստութեամբ:

Անգլիոյ մէջ ֆութպօլի 15000 անաթոր (մերիններուն պէս... թախտական) և 500 բրոֆիսիօնէլ (քիթերնին մեծցած մեր... վաստակաւոր խաղացողներուն նման) խումբեր կան, 250000 ամաթէօր և 5000 բրոֆէսիօնէլ անգամներով: Եւրաթր 8000 մրցում տեղի կ'ունենայ որոնց ներկայ կ'ըլլան անազին թիւով հանդիսատեսներ: Ամէն շարժու բաղմամբիւ գրաւի տուներ կը տպուին և չկայ գործարան մը, աշխատանոց մը, նաւարան մը որ այս ծախուած տուներէն որ և է մէկը մերժուի: Տոմսակալաճառներու համար ալ չհարբեր գործ մըն է այս, քանի որ 100ին 10ը իրենց կը տրուի:

Նիտաքէսրի մէջ, առեւտրական տուն մը ոստիկանական քննութեան ենթարկուելով, գրաւի այս տուներէն 51528 կորոններ գտնուեցաւ, որոնց բոլորին վրայ ալ գրաւի գումարը արձանագրուած էր. 2258 հօտը կէս չիլինկ նոց, 5487 հօտը մէկ չիլինկնոց իսկ կէսները աւելի բարձր գումարներով էին: 4 ամսուան ընթացքի մէջ, միայն այս առեւտրական տան պաշտօնէութիւնը 19987 ոսկի գրաւ բռնած էր ու 7229 ոսկի չահած: Մարդիկը մեզի պէս... երկու շիշ գարեջուրի կամ պնակ մը պաղպաղակի համար գրաւ չեն բռներ... մեզմէ աւելի գործնական են:

Այս և հազարաւոր օրինակներ ֆութպօլի ընկերակցութիւն հարկադրուած են որ զիմէ խորհրդարանին, օրինագիծով մը այս տղեղ չահագիտութեան առաջջբ առնուելու խնդրանքով:

Այս օրինագծին համաձայն, Միացեալ թագաւորութեան մէջ արգիլուած պիտի ըլլայ ֆութպօլի և տարրեր սրտազական մրցումներու շուրջ բռնուած գրաւներու հետ առընչութիւն ունեցող ծանուցումի որ և է հրատարակութիւն

յայտագիր, կտրօն կամ ստացագիր: Օրէնքը հետեւել պատժի երբ կը կանխատէսէ: —

Օրինագանցները առաջին անգամուան համար 25 ոսկի է ոչ աւելի դրամական տուգանքի և 4 ամիսէ ոչ աւելի բանտարկութեան պիտի ենթարկուին: Երկրորդ անգամուն համար 50 ոսկի տուգանքի և 6 ամիս բանտարկութիւն: Երրորդին՝ 100 ոսկի և 12 ամիս:

Ամենաստոյգ ազրիւրէ մը (արդէն բոլոր ազգ, արժանատի աշուրերը այս ազրիւրէն... ծովը կը թափին) կը տեղեկամ թէ սնանկութեան սնարին մօտեցած հայեր զիմելով մեր ազգ... խորհրդարանին, խնդրած են որ օրինագծով մը զպրոցականներու ֆութպօլ խաղալը արգիլուի, որովհետեւ մէկ կողմէ իրենց մէջ յախտեակական աւերներ... գործող գեղեցիկ սեռի անգամուներուն գոյնզգոյն ներկերու և զարդերու ծախքերուն վրայ այս... լակտիկ ներուն կոչիկի դրամ հասցնել իրենց հաւակին և... քսակին հասողութենէն շատ բարձր է, և կ'աւելցնեն թէ՛ եթէ երբեք իրենց այս առաջարկը կամ ինդրանքը նկատու չառնուի, իրենց ազգ, տուրքը վճարել պիտի մերժեն: Միւս կողմէ, պոլսաբնակ մեր ազգային խորհուրդը, խնդրոյն անմիջական կարեւորութիւնը նկատի առնելով, կ'սպասէ որ... մեծամասնութիւնը մը կազմելու միջոց մը գտնէ նախ, այսինքն իր վէրքերը դարմանէ ու յետոյ անցնի օրակարգի այս խնդրոյն և մինչև այդ, իշխալ կենսական հարցը բարձր լնելով, անոր վրայ հանգիստ քուն մը քաշելու համար հարկ եղած մէկ անկիւնը... նետուած է: Մինչև այդ, մեր ֆութպօլիստ պարունները կրնան ազատօրէն... ծակծկել իրենց կոչիկները:

Նշանախօսութեանս առթիւ ազնիւ բարեկամներուս և սիրելի ընկերներուս կողմէ ինն անձամբ կամ գրաւոր կերպով յայտնուած մաղթանքներու փոխարէն իմ խորին և անկեղծ շնորհակալութիւնները յայտնելու տեղ պիտի թելազրկի իրենց որ իրենք ևս գործնականապէս ինձ ցոյց տային թէ ըրածս իրապէս շնորհատրելի է: Ով ըսաւ որ նոր արշաւի կըր նամ ակախ մինակը արշաւողին խենթ է կ'ըսեն, բոլոր առողջ և ազնիւ երիտասարդները պէտք է նոր մրցումին մասնակցին: Մէկ ծաղիկով գորուն չգար... մանաւանդ երբ այդ ծաղիկը հոտ իսկ չունի!!!:

ՎԱՀՐԱՄ Ս. ՓԱՓԱԶՆԱՆ

Հ. Մ. Ը. Մ. ԿԵՂԵՐՈՆԵՆ

Ա. ՆԻՍՏ 15 ՄԱՅԻՍ

Նորընտիր վարչութիւնը դիւանի ընտրութիւն կատարեց հետեւեալ կերպով :
Ասենապէս Տօք. Մութաֆեան
Ասենապէս Պ. Շապոյեան
Գանձապէս Ժ. Խորասանճեան
Փոխ Ասենապէս Ժ. Խորասանճեան
Փոխ Ասենապէս Արշակ Յակոբեան
Կարգացուեցաւ Պ. Յովհ. Հինգիսեան իր գրազումներուն պատճառաւ հրաժարականը, ժողովը ցաւով ընդունեցաւ զայն, քուէի առաջ ելութեան կարգով իրեն յաջորդեց պ. Եղաւարդ Խաչատուրեան :

Ժողովը կարգ մը նախնական գործերէն վերջ ցրուեցաւ իրկուշարթի օր կրկին հաւաքուելու պայմանաւ :

Բ. ՆԻՍՏ 17 ՄԱՅԻՍ

Ժողովը օրակարգի վրայ գտնուած նիւթերով գրազեցաւ և ընտրեց Հ. Մ. Ը. Մ. ի գործունէութեան չորս ճիւղերու համար յաճճախումներ :

Ա. ՍԿԱՌԻՏԱԿԱՆ պ. պ. Գր. Յակոբեան
Հայկ Ճիգմէճեան և Արշակ Յակոբեան :

Բ. ՇՈՒԷՏԱԿԱՆ պ. պ. Գր. Մերձասօֆ, Լևոն Յակոբեան, Արարատ Քրիսեան :

Գ. ԱԹԼԷԹԻԲ պ. պ. Վահրամ փափաղեան, Բիզանդ Կէօղի պօլոյիկեան, Գր. Յոկոբեան :

Դ. ՅՈՒԹՊՈԼ պ. պ. Ս. Ծղէսդեան, Տիգրան Խոյեան, Եղ. Խաչատուրեան :

Սոյն Յանձնախումբերն ալ պիտի ընտրեն իրենց խմբապետները որք պիտի գործադրէ յանձնախումբին որոշումները և պատասխանատու պիտի ըլլայ անոր, իսկ յանձնախումբերն ալ պատասխանատու են կեդրոնի վարչութեան :

Այս չորս յանձնախումբերէն դուրս ընտրեց միջազգային սկստութեան յանձնախումբի անդամներ. պ. պ. Ժիրայր Խորասանճեան, Վահրամ Փափաղեան և Գր. Յակոբեան : Իսկ որք սկստութեան հազուսաներու շինութեան համար ընտրուեցան պ. պ. Հայկ Ճիգմէճեան, Եղ. Խաչատուրեան, Օննիկ Եազմաճեան :

Կարգացուեցան Մասնաճիւղերէն և այլ տեղերէ եկած նամակներ և միութեան ներքին գործերու վերաբերեալ առաջարկներ :

Գ. ՆԻՍՏ 24 ՄԱՅԻՍ

Օրակարգի վրայ գտնուած կարգ մը խնդիրներու վրայ վիճարանութիւններ տեղի ունեցան :

Հայ Հանրապետութեան տարեդարձի օրանակի ի նպաստ կազմակերպուելիք դաշտահանդէսներու մասին սկստութեան մասնակցութեան խնդիրը բաւական երկար խորհրդակցութեան առարկայ դարձաւ :

Կարգ մը սխալ հասկացում խնդիրներու մասին տեղեկութիւն ուղղուեցաւ Պ. Գր. Յակոբեանէ և իրեն լուսարանութիւններ արուեցան :

Դ. ՆԻՍՏ 27 ՄԱՅԻՍ

Օրակարգի վրայ կային Հայ Հանրապետութեան տարեդարձին առթիւ Հանրապետութեան ներկայացուցիչին մատուցանելիք շնորհատրութեան խնդիրը, կիրակիի հայ բանակի դաշտահանդէսին ծրագիրը, միջազգային սկստութեան ժողովին պահանջած հայ սկստութեան միակ դրօշի մը ձեւը և Հ. Մ. Ը. Մ. ի անդամներու մասնակցութեամբ կազմուելիք ֆօթօքարափ մը խնդիրը, որք Ա. Նիստին, առաջարկած էր պ. Հայ Ճիգմէճեան :

Սոյն խնդիրներու շուրջ խորհրդակցութիւններ տեղի ունեցան և միջանիներու որոշումը յետաձգուեցաւ յաջորդ նիստին :

ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻՂ

Հ. Մ. Ը. Մ. մասնաճիւղ հաստատուեցաւ ԱՐՄԱՇԻ գիւղատնտեսական վարժարանի մէջ :

ՎՐԻՊԱԿ

Մեյ 7-երորդ թիւին մէջ էջ 98 «Ողջոյն Քեղ» գրութեան հիմնարար տունին վերջը երկիր գրախտարաց»ը պիտի ըլլայ «Երկիր Դրախտավայր» :